Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 2

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունում 2019 թ. հոկտեմբերի 2-ին ժամը 10:00 կայացած ՓՄՁ զարգացման խորհրդի ենթախորհրդի երկրորդ նիստի վերաբերյալ

քաղ. Երևան
Մասնակցում էին՝

Ենթախորհրդի անդամներ՝

Տիգրան Խաչատրյան	ՀՀ էկոնոմիկայի նախարար (ենթախորհրդի նախագահ)
Նաիրա Ավագյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Կարեն Գևորգյան	«Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի գործադիր տնօրենի տեղակալ
Վլադիմիր Շատվերով	Երևան քաղաքի առևտրաարդյունաբերական պալատ
Էդուարդ Կիրակոսյան	Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության տնօրեն
Էդուարդ Բաղալյան	«Քաղաքացի-հարկատու-բիզնես» իրավապաշտպան կազմակերպության փոխնախագահ
Փայլակ Թադևոսյան	«Հարկ վճարողների պաշտպանություն» ՀԿ նախագահ
Հասմիկ Բարխոդարյան	«ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ
Մարինա Սանդոյան	«ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ
Տիգրան Շահբազյան	«Հայաստանի ՓՄՁ հաշվապահների ասոցիացիա»
Գևորգ Պողոսյան	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի կողմից ֆինանսավորվող գործարարության աջակցման գրասենյակի ղեկավար
Իզաբելա Հովհաննիսյան	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի կողմից ֆինանսավորվող գործարարության աջակցման գրասենյակի փորձագետ
Դավիթ Աղաջանյան	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի կողմից ֆինանսավորվող գործարարության աջակցման գրասենյակի փորձագետ
Դիանա Հարությունյան	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի կողմից ֆինանսավորվող գործարարության աջակցման գրասենյակի փորձագետ

Նիստին մասնակցում էին նաև ՀՀ էկոնոմիկայի նախարարության ձեռներեցության զարգացման վարչության աշխատակիցները:

1*. Օրակարգի հարցերի հաստատում և ՓՄՁ զարգացման խորհրդի ենթախորհրդի նախորդ նիստերի ամփոփում*

Ներկայացվեցին և ամփոփվեցին նախորդ նիստի արդյունքներով տրված հանձնարարականների ընթացքի վերաբերյալ տեղեկատվությունը, մասնավորապես՝ ՓՄՁ զարգացման խորհրդի գործունեության շրջանակներում ներքո մշակված ՀՀ քրեական օրենսգրքում առկա մի շարք տնտեսական հանցագործությունների ապաքրեականացման, հարկերի կամ հաշվարկների ուշացման համար նախազգուշացումը որպես վարչական տուգանք սահմանելու, ՀՀ-ում լիզինգի՝ որպես այլընտրանքային ֆինանսական գործիքի զարգացմանը նպատակաուղղված իրավական ակտերի նախագծերի ընթացքի և հարկային խնդիրներին առնչվող հարցերը:

Քննարկումներից հետո հանձնարարվեց՝

1.ՎՁԵԲ կողմից ֆինանսավորվող գործարարության աջակցման գրասենյակին

---

1. ՀՀ էկոնոմիկայի նախարարության հետ համատեղ երկու շաբաթյա ժամկետում նախապատրաստել ՀՀ քրեական օրենսգրքում առկա մի շարք տնտեսական հանցագործությունների ապաքրեականցման նախագծերի փաթեթի առնչությամբ համառոտ տեղեկանք՝ առկա օրենսդրություն և կատարվող փոփոխություններ, ինչպես նաև ակնկալվող արդյունքներ ձևաչափով:
2. Նախապատրաստել համառոտ վերլուծություն ՀՀ-ում լիզինգի՝ որպես այլընտրանքային ֆինանսական գործիքի զարգացման նպատակով մշակված մի շարք իրավական ակտերի փաթեթի վերաբերյալ՝ դրա ընդունման դեպքում 2-3 տարվա կտրվածքով ռիսկերի և առավելությունների մասով կանխատեսումներ, ֆինանսական պորտֆելի փոփոխություններ և այլն:

2.Վերջին 5 տարիների ընթացքում գործունեությունը դադարեցրած ընկերությունների՝ պարզեցված կարգով լուծարման նպատակով մշակված նախագծի վերաբերյալ

Քննարկումներից հետո հանձնարարվեց՝

2.ՎՁԵԲ կողմից ֆինանսավորվող գործարարության աջակցման գրասենյակին

Լրամշակել և մեկշաբաթյա ներկայացնել վերջին 5 տարիների ընթացքում գործունեությունը դադարեցրած ընկերությունների՝ պարզեցված կարգով լուծարման նպատակով մշակված նախագիծը՝ ներառելով կարգավորման նոր լծակներ:

3. Հարկային վարչարարության և Հարկային օրենսգրքի ՓՄՁ սուբյեկտներին վերաբերող որոշ դրույթների վերանայման վերաբերյալ

«Հարկ վճարողների պաշտպանություն» ՀԿ-ի և «Քաղաքացի-հարկատու-բիզնես» իրավապաշտպան կազմակերպության ներկայացուցիչների կողմից ներկայացվեցին բիզնեսին խոչընդոտող օրենսդրական կարգավորումների, ինչպես նաև հարկային վարչարարության հետ կապված մի շարք խնդիրներ:

Քննարկումներից հետո հանձնարարվեց՝

«Հարկ վճարողների պաշտպանություն» ՀԿ-ին և «Քաղաքացի-հարկատու-բիզնես» իրավապաշտպան կազմակերպությանը

---

1. Գույքագրել հարցի առնչությամբ ներկայացված հարկային խախտումների հետ կապված դեպքերում տուգանքների և օրենսդրությամբ սահմանված պատասխանատվության այլ միջոցների հետ կապված խնդիրները:
2. ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Նաիրա Մարգարյանի հետ համատեղ աշխատանքային կարգով քննարկել գույքագրված հարցերի քննարկման նպատակով:

4. Պետություն-մասնավոր գործընկերության շրջանակներում մասնավոր հատվածի ներկայացուցիչների հետ իրականացված մի շարք հանդիպումների արդյունքներով վերհանված և գույքագրված՝ ձեռնարկատիրության սուբյեկտների գործունեությանը խոչընդոտող խնդիրների վերաբերյալ

Ներկայացվեցին խոշոր առևտրային ցանցերի հետ կապված ՓՄՁ-երի խնդիրները, ԱԱՀ հարկման դաշտում գործող արտադրողների համար մրցունակության, առևտրի ոլորտում առկա հիմնախնդիրների մասով առաջարկվող կարգավորումների, ՓՄՁ-երի կողմից արտահանման հետ կապված և արտահանման խրախուսման պետական աջակցության մեխանիզմների կիրառման և այլ հարցեր:

Քննարկումներից հետո հանձնարարվեց՝

ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Նաիրա Մարգարյանին՝

Ենթախորհրդի անդամների հետ նպատակահարմար ձևաչափերով (աշխատանքային խմբեր, ենթախմբեր, մասնագիտական քննարկումներ) համատեղ քննարկել՝

1. Խոշոր առևտրային ցանցերի և ՓՄՁ սուբյեկտների միջև առկա խնդիրների կարգավորման հնարավորությունները առկա օրենսդրության կարգավորումների, ինչպես նաև հնարավոր փոփոխությունների նպատակահարմարությունը:
2. Այլընտրանքային մեխանիզմների ներդրման հնարավորությունները, մասնավորապես՝ որպես այլընտրանքային լուծումներ դիտարկելով ֆակտորինգի կիրառման նպատակահարմարությունն ու կիրառման հնարավորությունները, մանրածախ առևտրի ոլորտում գործող բոլոր սուբյետկտների համար գործունեության հարկման միասնական՝ շրջանառության հարկի համակարգի ներդրման նպատակահարմարությունն ու ռիսկերը և այլն:
3. Տեղական արտադրողների կողմից միջազգային ցուցահանդեսներին և էքսպոներին էլեկտրոնային հարթակների միջոցով ներկայացվածության հնարավորությունների, արդյունավետության ևայդ հարցում պետական աջակցության հետ կապված հարցերը:
4. Բիզնես ասոցիացիաների, միությունների, պալատների և այլ կազմակերպությունների կողմից տեղական արտադրողի արտահանման կարողությունների զարգացման հարցերում ծառայությունների մատուցման հնարավորությունների գնահատում ևայլն:
5. Անհրաժեշտության դեպքում, նիստի ընթացքում ներկայացված հարցերի հետ կապված կազմակերպել քննարկումներ՝ ներառելով նաև այլ գերատեսչությունների և կազմակերպությունների մասնագետներին:

ՓՄՁ զարգացման
ենթախորհրդի նախագահ S. Խաչատրյան